

Հ.Յ.Դաշնակցութեան ուժականութեան գրաւականը

ՌՈՒՔԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

Հ.Յ.Դաշնակցութիւնը 100-ամեայ իր ճամբի վրայ թշնամիներ շատ է ունեցել: Հայ ժողովրդի արդար դատը թաղել փորձող ամէն մէկ ուժ, դա լինի Օսմանեան կայսրութիւնը, ցարական կամ խորհրդային Ռուսաստանը եւ մինչեւ անգամ հայ բոլշեւիկներն ու հետագային՝ Հայաստանի Համայնավար կուսակցութիւնը՝ (սրանց բոլորին էլ, հայ թէ օտար, գիտակցաբար նոյն համակարգի տակ զնելով),՝ յարձակումի թիրախ է դարձրել Դաշնակցութիւնը, քաջ գիտենալով, որ Դաշնակցութեան գլխատումով, զրկած կը լինեն հայ ժողովուրդին իր կամքից, իր առաջնորդից, իսկ անկամ ու անգլուխ գանգուածին դիւրին է ենթարկել ու տիրել:

Հին օրերի աշխարհակուլ ղեւերի ու հրաշունչ վիշապների դէմ ծառացող դիւցազուն քաջերի պէս, Դաշնակցութիւնը անհաւասար պայքարի մէջ է մտել իր թշնամիների, հայ ժողովրդի թշնամիների դէմ՝ ի խնդիր հայ ժողովրդի գերագոյն նպատակների, նրա իդէալական իրավիճակի իրագործման: Դաշնակցութիւնը յաղթել է ու յաղթուել, բայց հենց այդ պայքարից է ստացել իր աւելը, յարատեւելու ու անդեղեւ մարտնչելու իր վճռականութիւնը:

Այդ պայքարը հաշարունակում է մնալ Հ.Յ.Դաշնակցութեան ուժականութեան գրաւականը:

* * *

1920-ին, երբ իրականութիւն էր դարձել Հայաստանի պետականութեան վերածնունդը, երբ Հ.Յ.Դաշնակցութեան գերմարդկային գոհարերութեամբ երկիրը դէպի ներքին ու արտաքին համեմատական կայունացում, դէպի իդէալ ապագայ՝ միացեալ Հայաստանի իրագործում էր ընթանում, ուստի-թրքական զօրակցութեան դիւային մեքենան արիւնարբու ճիրանները երկարեց՝ մանուկ Հայաստանին խեղդելու համար: Ո՛չ ուստի-բոլշեւիկեան ամբողջատիրական ծաւալման ճամբին եւ ո՛չ էլ թուրք ազգայնական՝ համաթուրանական ձգտումների համար հանդուրժելի չէր գոյութիւնը մի ինչ որ հայկական անկախ հանրապետութեան: Ապացոյցները շատ են ու ցցուն, հենց օրինակ Ստեփան Շահումեանը, Մոսկուայի քաղաքականութեան այս կոյր հետեւորդը, Անդրկովկասի հակաբոլշեւիկ զիմազծից մտահոգւած, 1918-ի յունիսի 23-ին, Լենինին ու Ստալինին գրում էր Բաքից, «Մեր զրութիւնը միջազգային տեսակէտից իսկապէս սոսկալի է: Անկախ Վրաստան, անկախ Ադրբեջան, որպէս թէ անկախ Հայաստան...»:

(1) Պարզ էր որ Կովկասում ստեղծուած անկախ պետութիւնները խանգարում էին ցարական կայսրութեան այդ ծայրամասում բոլշեւիկեան իշխանութիւն հաստատելու մոսկովեան ծրագիրներին: Պէտք է ոչնչացուէին այդ ազգայնական որջերը՝ պէտք է տապալուէին ազգայնական քաղաքականութեան տուն տուող մենշեւիկները Վրաստանում, մուսաւաթականները Ադրբեջանում եւ դաշնակցականները Հայաստանում: Միւս կողմից պարտուած ու կործանուած Օսմանեան կայսրութեան ծոցում ծայր առած ազգայնական շարժման ղեկավարութիւնն էլ չէր կարող իր նպատակների իրագործման ճամբի վրայ փուշի պէս բուսած Հայաստանին հաշտ աչքով նայել: Եւ Մուսթաֆա Քեմալի հաւատարիմ զինուորներ՝ Ալի Ֆաուտը, Սալիլ փաշան ու Պէրի Սամին Մոսկուայում, Զիչերինի եւ նրա օգնական՝ հայազգի Կարախանի հետ փորձում էին «բոլշեւիկներու հետ բարեկամական դաշինք կնքել», նրանց հետ միջոցներ էին խորհում «Հայաստանի ճամբան բանալու» եւ Բաքու հասնելու համար՝ վերածնունդ նոր թուրքիոյ համար կարեւոր էր ունենալ Մոսկուայի հաւանութիւնն ու համագործակցութիւնը՝ թրքահա-



... Իմ վիճակի ծանրութիւնը ինձ չի ընկնում, միայն նրա համար, որ ես գիտակցաբար ընտրել էի հասարակական գործունէութեան այնպիսի ապարէզ, որտեղ իւրաքանչիւր րոպէն սպասում էր ինձ քանտ կամ կախաղան եւ կամ «մահաոյթ սպանիչ գնդակը»: Ես ցաւում եմ, սրտանց ցաւում, որ քախտը շուտ գրկեց ինձ փշոտ ճանապարհներից, որոնց մէջ րոպիկ ոտներով ման գալ սիրելի էր ինձ, որոնց մէջ դեռ երկար, միմիայն վերջին շունչ կամեցում էի տանջուել, քանի չարչարուող հայ ժողովրդի համար չէ ծագել նոր կեանքի առաւօտ: Մուրատս մնաց անկատար: Երկինքը գրկեց ինձ հրացանը ձեռքս կռուի դաշտում ընկնելու քախտաւորութիւնից:

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ
(Կախուկէն առաջ գրած նամակէն)



Ինձի մի ֆարոգեֆ անդադար խոհեմութիւն: Ա՛խ, կեանքը առանց այդ ֆարոգիւն արդէն զիս ու բոլոր մարդերը բրած է պէտք եղածէն աւելի խոհեմ եւ զգոյշ: անոր համար ալ, եւ բոլորը դարձեր են մանր մանր հաշուազէտներ, պատառ մը հացի ետեւէ վազողներ երկչոտ, սարսափահար: Ա՛խ, դուք երկուքդ եղեք հակառակիմ ֆուրմերը: Ա՛ն է, դժուար: Մարդոց մէջ միւսիմ պաշտամունքը գրգռելը հեշտ է, օ՛, եղիմի պէս դիւրաբոյս, յարանում է միւսիմ սէրը, ռոտգումի իսկ չի կարօտիր: Կրնա՞ք ընել հակառակը, խեղճութիւն սերմանել, արհամարհանք մեքարկել մարդոց, եւ ֆաղել մեծ գործեր, խորունկ գործեր, բնդուն գործեր:

ԲԱՐՍԵՂ ԾԱՀՊԱՋ
(իր քոյրերուն գրած նամակէն)

յաստանի հողերը ընդմիջտ հայերից դատարկելու գործում: (2)

Պայքարը ճակատագրային էր ու կատաղի, բայց վկայ Սիմոն Վրացեանի, Դրոյի եւ Ալեքսանդր Խատիսեանի քաղաքական ու դիւանագիտական մաքառումը Երեւանում ու Ալեքսանդրապոլում, վկայ Նժդէհի դիւցազնական սխրանքները Լեռնահայաստանում՝ դաշնակցական ղեկավարութեան գերմարդկային ճիգն ու զոհաբերութիւնը չկարողացաւ Հայաստանը փրկել: Ռուս-թրքական զօրակցութիւնը ահաւոր էր, անասելի: Սակայն, ո՞վ գիտէ, գուցէ Կարմիր բանակն ու քեմալական զօրքերը չկարողանային ծունկի բերել Դաշնակցութեան, գուցէ հնարաւոր լինէր դիմադրել եթէ երկիրը ներսից չպայթէր ապստամբութիւններով ու խլրտումներով՝ Մոսկուայի տէրերին ծախուած հայ բոլշեւիկների կործանարար գործունէութեամբ: Մոսկուայի կովկասեան քաղաքականութեան կառքին լծուած Հայկական գործերի կոմիսարատը լաւագոյնս կատարում էր գործընթացի ծրագրաւորումը: Իսկ իրագործման համար կային Սարգիս կասեանները, Ասքանազ մուսեանները, Աւիս նուրիջանեանները, Բագրատ զարիբջանեանները, Սարգիս խանոյեանները՝ կենտրոնի կամքով խափանարարութիւնները գլուխ բերող, Հայաստանի կառավարութեան ջանքերի դէմ արգելք հանդիսացող: Եւ ցոյց, ապստամբութիւն, խլրտում Ալեքսանդրապոլում, Սարըղամիշում, Նոր Բայազէտում եւ Կարսում, կոչ ժողովրդին չխաբուել «անկախութիւններով» եւ «պառլամենտներով», այլ «ձգտել դէպի Ռուսաստան» որ պիտի տանէր «դէպի մեր լուսաւոր ապագան՝ սոցիալիզմը»: (3) Այսօր, կրկնելով պատմութեան նմանօրինակ իրականութեան դիմաց, համայնավար կամ հակահամայնավար հոսանքների ստեղծած քառսի առջեւ կանգնած, յիշենք, Գէորգ Ե. Ամենայն հայոց կաթողիկոսի կոչը այնօրերի բոլշեւիկ խռովարարներին ուղղուած ու կրկնենք միասին «Նոքա, որոնք... մեր տան մէջ մեր դէմ դաւեր են լարում պայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը, նոքա որոնք չեն տեսնում հայաջինջ ծրագիրների քայլ առ քայլ եւ հետեւողական իրագործումը, զգո՞ւմ են ինչ պատասխանատուութիւն է ծանրանում նոցա հանդէպ պատմութեան առաջ...»: (4)

Ռուս-թրքական յարձակողականը կարողացաւ ճիւղակոտոր անել Հ.Յ. Դաշնակցութեան ամրակուռ կաղնին: Թոյլ ընծիւղումներով մի վերջին ճիգով Դաշնակցութիւնը ժողովրդի արդար ընդվզումի գլուխն անցաւ ու պայքարեց՝ բոլշեւիկեան ճիրաններում դեգերող հայ ժողովրդին ազատութեան իրաւունքը վերադարձնելու: Բայց նոր արշալոյսը շատ էր կարճատեւ եւ մայրամուտը վաղահաս: Դաշնակցութիւնը դատապարտուած էր թողնելու իր հայրենիքը՝ իրեն ուժ ու կորով ներշնչող ակունքը, ու հեռանալու՝ միշտ հայեացքը դէպի յետ: Դաշնակցութիւնը իր սեփական տնից դուրս չպրտուած, հեռուից կարօտով նայեց, Խորհրդային Հայաստանի յաջողութիւններով ոգեւորուեց, ձախողութիւններից տխրեց, ու երբ օգնութեան ձեռք երկարեց հեգնանք ու թշնամանք միայն ստացաւ իրրեւ պատասխան:

70 տարի շարունակ, Խորհրդային Հայաստանի ղեկավարութիւնը ուրացաւ հայ ժողովրդի պատմութեան 1918-1920-ի անկիւնադարձային հանգրվանը ու արգիլեց հայ մարդուն՝ անգամ յիշելու կամ խօսելու այդ մասին: Խորհրդահայ պատմագրութիւնը դատաւիտեց Հայաստանի «դաշնակ կառավարութեան», նրան հայ բանուորի ու գիւղացու արիւնարբու թշնամին կոչեց: Հակադաշնակցական քարոզչութիւնը հայ նոր սերունդի դաստիարակութեան առանցքը կազմեց: Այսօր արթնանում են ճնշուած խիղճերը ու յետ նայում: Դաշնակցական գրականութիւնը՝ յուշ, ակնարկ, պատմութիւն, ուսումնասիրուում է անվերապահօրէն:

Բոլշեւիկեան կարգերը «հաց ու շաքարով» չլցրին Հայաստանը՝ ինչպէս խոստացել էին հայ բոլշեւիկ գործիչները, Հայաստանի տնտեսութիւնը չբարելաւուեց, այլ միայն դարձաւ մի աննշան հանգոյցը բռնի ուժով իրարու միացուած ազգութիւնների ու «անկախ» հանրապետութիւնների բարդ ու խճճուած տնտեսական ցանցի: Հայ Դատը «լուծուեց» հիմնակէտ ունենալով Թուրքիոյ շահերի պաշտպանութիւնը: Չէ՞ որ Ստալինն էր



Անդրանիկի արձանը, Կումայրի

ասել թէ «որպէսզի մենք կարողանանք 'օժանդակել Թուրքիոյ, պայման է որ այն պետութիւնները, որոնք ի մօտոյ անոր հետ բանակցութեան պիտի ձեռնարկեն, գոհացուցած ըլլան անոր ազգային շահերը»: (5) Ուրեմն, Հայաստանի հողային ամբողջութիւնը չպահպանուեց այլ գոհագործուեց ռուս եւ թուրք զօրակցութեան ամրապնդման ի խնդիր՝ վկայ 1921-ի մարտ 16-ին Մոսկուայում կնքուած ռուս-թրքական «բարեկամական» դաշնագիրը, որի տակ նոյն թուականի հոկտեմբեր 13-ին կնքուած Կարսի դաշնագրի ստորագրումով իր մեղկ համաձայնութեան կնիքը դրեց «Խորհրդային անկախ Հայաստան»ի ներկայացուցիչ Ասքանազ Մուսեանը: (6) Համայնավարութիւնը կամ գոնէ լենինեան մեկնաբանութիւնն ու գործնականացումը այդ գաղափարաբանութեան, աղէտ էր Հայաստանի համար. իսկ Գորբաչովեան վերակառուցման եւ հրապարակայնացման քաղաքականութեան ընձեռած մթնոլորտը առիթ՝ որ թարախակալած վէրքը պայթի ու նողկալի թարախը հոսի առատօրէն ու անկաշկանդ ի տես աշխարհի, առիթ՝ որ լուս դժգոհութիւնները զանգուածային շարժումի վերածուեն ու հայոց ազգային ազատագրական պայքարի նոր էջ բացուի մեր պատմութեան մէջ:

* * *

70 տարի արգելափակման մէջ ապրած ժողովուրդը ձգտեց, կանչեց ու սպասեց Դաշնակցութեան: Պատմական դեր ունէր ստանձնելիք Դաշնակցութիւնը, կրկնուում էին իր ծնունդին տուն տուող նախա-1890 թուական-

Չենք գիտեր, եղա՞ծ է արդեօք կուսակցութիւն մը, որ այսօր կարն ժամանակի մը մէջ ջնջէ մարդոց բոլոր տարբերութիւնները, տարիքի տարբերութիւնները, սեռի տարբերութիւնները, մտքի, ինչքի ու դասակարգերու տարբերութիւնները ու բոլորին տրամադրութիւնը, կամեցողութիւնն ու կամքը լարէ նոյն ուղղութեամբ, սխրալի դարձնէ ապրելու կամ մեռնելու նոյն ոճը: Այդպէս եղաւ, քով քովի եկան, դաշնակցեցան ու Դաշնակցութիւն կազմեցին մտաւարկանք անուս մարդուն հետ, մշակը՝ մշակոյթի ներկայացուցիչին հետ, հարուստը՝ աղքատին հետ, զինուորականը՝ վարժապետին հետ, վաճառականը՝ անիշխանականին հետ, բանաստեղծը՝ անլեզու վիրաւորին հետ, ծերունին եկաւ՝ ցուպը ձեռին, կիներ եկաւ՝ ամուսինը կոխի մամբելու ստիպումով, աղջիկը եկաւ՝ քննոյշ կեանքը ծանր համարելով իրեն, ամենքը եկան թունդ-թունդ ելած սրտերով, վերք տալ-ստանալու յանձնառութեամբ, հայրենիքի ազատութիւնը տեսնել ու մեռնելու պապակով:

Պ. ՄՆԱՊԵԱՆ



Արմենիա՛, Արմենիա՛, ով դու «հանուրց եհիսիսակամաց վեհագոյն»։ դու որ չորս հազար տարիներից ի վեր լոյսի ու քաղաքակրթութեան քանակիքն եղար քո դրախտային քարձրաւանդակների վրայ եւ լոյսի սիրուն սուսերամերկ ծառացար համայն Ասիայի քարքարոսութեան դէմ որպէս Պալլաս Աթենաս, որպէս «Մայր ամենայն զգաստութեանց» Ամահիտ։

Արմենիա՛, Արմենիա՛...

Ո՛վ դու սկիզբ իմ բոլոր ուրախութիւնների եւ իմ բոլոր տրտմութիւնների։

Ո՛վ դու աղբիւրն իմ բոլոր յոյսերի, եւ բոլոր յոյգերի։

Եւ բոլոր իմ բերկրանքների։

Եւ բոլոր իմ խորհուրդների։

Ո՛վ իմ պաշտելի Արմենիա։

ԱՌԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ների պայմաններն ու պահանջները...

Այսօր իր առաջին 100-ամեակի շէմին, 70 տարի աքսորից յետոյ, Հայաստան է վերադարձել Դաշնակցութիւնը, առանց թմբուկի ու փողահարութեան, վերադարձել է իր դերը կատարելու։ Բայց ինչո՞ւ վերադարձ, միթէ՞ երբեւէ բացակայել էր երկրից։ Միթէ՞ հնարաւոր էր 70 տարիներ բացակայութիւնից յետոյ երկիր մտնել ու այդպէս հարազատ, արագ եւ սահուն, կազմակերպուած կառոյցով ներկայանալ ժողովրդին։ Իրողութիւնը պէտք է ընդունել։ Ժողովրդի ակունքներից կեանք ստացող Դաշնակցութեան արտաքին կառոյցը միայն Հայաստանի խորհրդայնացումով վերացաւ երկրում։ Դաշնակցութիւնը ապրեց ժողովրդի մէջ՝ ոգեղինացած, իբրեւ միթ ու առասպել։ Եւ որքան սրուեց պայքարը նրա դէմ՝ որքան հատու դարձան թունոտ շանթերը, այնքան աւելի շեշտուեց հետաքրքրութիւնը հայ մարդու մէջ՝ գտնելու այդ հրաշք էութիւնը, որի դէմ լարուած էր Խորհրդային Հայաստանի քարոզչական մեքենան։

Դաշնակցութիւնը այսօր իր 101րդ տարին սկսում է նոր տեսլականով, բայց եւ նոր մարտահրաւէրով։

Բազմաթիւ են դժուարութիւնները։ Հայաստանի մէջ ուժի պայքար է գնում։ Կուսակցութիւններն ու խմբակցութիւններ մաքառում են բարձրանալու, երկրի ղեկավարութեան տիրանալու։ Եւ այդ ճամբին կիրառուած միջոցները չեն բացառում բացայայտ հակամարտութիւն, ցեխարձակում, վարկաբեկում, կամ մէկի դէմ միւսի հետ զաղտնի զօրակցութիւն։ Մասնայական մակարդակի վրայ հակառակ պատկերն է տիրում, նոյնքան վտանգաւոր։ Ֆեթիշացած, կուռքի տեղ դրուած Դաշնակցութիւնից սպասուում է տառապեալ Հայաստանը մի կախարդական հարուածով առողջացնել ու վերականգնել, նեխած ու փլուզումի դատապարտուած տնտեսական քաղաքական ու ընկերային ենթակառոյցի վրայ հրաշք երկիր ստեղծել։ Իսկ պատմութեան ընթացքին մարդկութիւնը կուրորէն հաւատացած նման ֆեթիշներ շատ է ուրացել ու երկրպագած կուռքերին բարձրութեան պատուանդանից վար գլտորել ու փչրել։ Այսպիսի իրավիճակի մէջ նպատակասլաց, իրատես եւ չըջահայեաց քաղաքականութիւնն ու գործունէութիւնն է միայն գրաւականը յաջողութեան, եւ, մէկ անգամ եւս, ներքին ու արտաքին թշնամիների հակամարտութիւնը՝ գրաւականը Դաշնակցութեան ուժականութեան։ Բարի գալուստի ողջագործումները կ'աւարտուեն, տարիների սպասումից բխած յուզական ոգեւորութիւնը կը մարի, կը մնայ գործը։ Հ.Յ.Դաշնակցութիւնը իր գործով է որ պլէտի ցոյց տայ թէ արժանի է հայ ազատագրական պայքարի միթոսի աղբիւր մնալու, ատակ է եւ ունի վճռականութիւնը երկրորդ հարիւրամեակը սկսելու նոյն թափով եւ ուժականութեամբ ինչ սկսեր էր առաջին օրից։

ՅԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

1.- Ստ. Շահումեան, «Երկեր» հատոր երրորդ, էջ 324։ Նամակը գրուած է 1918 յունիս 23-ին Բաքուից։

2.- Տես Գաբրիէլ Լազեան, «Հայաստան եւ Հայ Դատը», էջ 241-255։

3.- Կոմունիստական երիտասարդական «Սպարտակ» միութեան նոյնաման քերթի 1920 մայիս մէկի համարում լոյս տեսած այս կոչը տես «Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ ռեվոլուցիան եւ սովետական իշխանութեան յաղթանակը Հայաստանում», Հայկ. ՍՍՌ Ակադեմիայի հրատ., Երեւան, 1960, փաստաթուղթ թիւ 164, էջ 260-262։

4.- «Հայաստան եւ Հայ Դատը», էջ 208։

5.- Մէջբերումը առնուած է Ստալինի «Հայաստան եւ Թուրքիա» յօդուածից, լոյս տեսած 1921-ի մարտ 4-ին։ Տես Գաբրիէլ Լազեան, «Հայաստան եւ Հայ Դատը», էջ 197։

6.- Հայրենի հողերը եւ իր կամքն ու խիղճը ծախու հանած լինելու յանցանքի ծանրութիւնն էր արդեօք որ անճնապանութեան տարաւ Մուսեանին։